

Կ Ա Ր Ծ Ի Ք
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՍԱԽՈՍԻ

Կարեն Իսմայիլի Ալավերդյանի Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման համակարգի կատարելագործման ուղիները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումներն ուղղված են պետության, որպես մեկ տնտեսական միավորի ֆինանսական հաշվետվությունների ներկայացմանը, որը պետք է հնարավորություն տա սահմանված պարբերականությամբ տեղեկատվություն ստանալու պետության ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների և դրամական հոսքերի վերաբերյալ: Իր խնդիրների և գործառույթների իրականացման ժամանակ հանրային հատվածում նույնպես առաջանում է ֆինանսական հաշվետվողականության արդյունավետ համակարգի և միջազգայնորեն ընդունելի հիմունքներով պատրաստված արժանահավատ ֆինանսական տեղեկատվության անհրաժեշտություն: ՀՀ-ում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների նպատակը վերը նշված հաշվետվողականության համակարգի առկայության ապահովումն է: Դրա վերաբերյալ բարձրացված խնդիրների գիտական հետազոտությանն ու բարելավման ուղիների մշակմանն ու ներկայացմանն է ուղղված Կ. Ալավերդյանի հետազոտությունը:

Ներկայումս արդարացիորեն նշում է, որ արժանահավատ ֆինանսական տեղեկատվությունը էական նշանակություն ունի ռեսուրսների ներգրավման ու բաշխման վերաբերյալ արդյունավետ կառավարչական որոշումներ կայացնելիս: Միջազգայնորեն ընդունելի հաշվառման համակարգը բարելավում է հաշվետվողականությունը, հնարավորություն է տալիս ապահովել համադրելիություն ինչպես տարածաշրջանի, այնպես էլ աշխարհի տարբեր երկրների ֆինանսական հաշվետվությունների միջև:

ՀՀ քայլեր են իրականացվում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների շրջանակներում հանրային հատվածի կազմակերպությունների կողմից անցնելու հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի ներդրման համար կարևոր են համախմբման մեթոդաբանության մշակումը և պետության համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը, ինչը հնարավորություն կտա տեղեկատվություն ստանալ պետության ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների և դրամական հոսքերի վերաբերյալ:

Միաժամանակ, հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների որակի բարելավման նպատակով կարևորվել է դրանց պարբերաբար մշտադիտարկումն ու ընդգծվել ֆինանսական հաշվետվությունների համախմբման համար արդյունավետ գործիքակազմի համախմբման մեթոդաբանության անհրաժեշտությունը:

Նշված կարևոր հիմնախնդիրների գիտական հետազոտման, լուծումների մշակման ու առաջադրման անհրաժեշտությունը ընդգծում է Կ. Ալավերդյանի ատենախոսության թեմայի արդիականությունը և հետազոտության արդյունքների կիրառման կարևորությունը ՀՀ հանրային հատվածի համակարգում գործող կազմակերպությունների համար:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Ըստ հեղինակի՝ ատենախոսության նպատակն է ուսումնասիրել ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի առկա իրավիճակը, բացահայտել իրավական կարգավորման արդի խնդիրներն ու ներկայացնել վերը նշված խնդիրների լուծման և համակարգի կատարելագործման ուղիներ: Նպատակի իրագործման համար առանձնացվել են հետևյալ խնդիրները, որոնք պայմանավորել են հետազոտության տրամաբանությունը և կառուցվածքը.

- Ուսումնասիրել հանրային հատվածի կառուցվածքն ու ներկայացնել դրա հիմնական բնութագրերը,
- Ներկայացնել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեթոդական հիմքերը,
- Բացահայտել ՀՀ հանրային հատվածում հաշվապահական հաշվառման համակարգի զարգացման ընթացքը,
- Բացահայտել ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի առանձնահատկություններն ու ներկայումս ոլորտում առկա մարտահրավերները,
- Ուսումնասիրել հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների որակի ապահովման հարցը՝ դիտարկելով դրանց մշտադիտարկման անհրաժեշտությունը,
- Ուսումնասիրել ֆինանսական հաշվետվությունների համախմբման միջազգային փորձն ու քննարկել համախմբման գործիքակազմի ձևավորման առանցքային մարտահրավերները,
- Բացահայտել ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման իրավական կարգավորման համակարգի թերություններն ու հիմնավորել գործող մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությունը.

- Ներկայացնել հանրային հատվածում ֆինանսական հաշվետվությունների համախմբման համար անհրաժեշտ գործիքակազմ,
- Ուսումնասիրել հաշվեգրման հիմունքով բյուջետավորման առկա միջազգային փորձն ու բացահայտել դրա կիրառման հեռանկարները ՀՀ-ում:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը շարադրված է 158 էջ ծավալով /առանց հավելվածների/, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից և 16 էջ հավելվածներից:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, գիտական արդյունքներն ու նորույթը, ստացված արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը:

Ատենախոսության առաջին «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման տեսական հիմքերն ու առանձնահատկությունները» գլխում անդրադարձ է կատարվել հանրային հատվածի կառուցվածքին, ինչպես ազգային, այնպես էլ միջազգային կարգավորումների լույսի ներքո, ներկայացվել են դրանց հիմնական բնութագրերն ու չափորոշիչները: Զուգահեռաբար, ներկայացվել է նաև հանրային հատվածի կազմակերպությունների ՀՀ օրենսդրությամբ կիրառվող բնորոշումը:

Հեղինակը անդրադարձ է կատարել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտում կիրառվող մեթոդական հիմքերին, մասնավորապես ՀՀՀՄՍ-ներին ու ԿՖԿ 2014-ին: Անդրադարձ է կատարվել նաև վերջին տարիներին ՀՀ հանրային հատվածում հաշվապահական հաշվառման համակարգի զարգացումներին՝ ներկայացնելով համակարգի էվոլյուցիան: Արդյունքում հեղինակի կողմից ներկայացվել է ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտում բարեփոխումների նշված ոլորտում միջազգային զարգացումներին համապատասխանությունը, որը հիմնավորվել է նաև ՀՄԴ կողմից 2018 թվականին 150 երկրների շրջանակում իրականացված ուսումնասիրության արդյունքներով:

Ատենախոսության երկրորդ «ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման կարգավորման գործիքակազմը» գլխում ներկայացվել են հաշվապահական հաշվառման գործող համակարգի առանձնահատկությունները: Հեղինակն անդրադարձել է պետական մասնակցությամբ առևտրային ընկերությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների ՀՀ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացման կարևորությանը, համայնքների ենթակայությամբ գործող ոչ առևտրային կազմակերպությունների

միասնական ցանկի կամ ռեեստրի ստեղծման ու հաշվառման աշխատանքների կազմակերպման անհրաժեշտությանը: Հեղինակի կողմից անդրադարձ է կատարվել հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվողականության պարբերաբար մշտադիտարկման անհրաժեշտությանը՝ այն ներկայացնելով որպես արժանահավատ ֆինանսական տեղեկատվության ապահովման կարևոր գործիք: Ընդգծվել է, որ մշտադիտարկումը հնարավորություն է տալիս բացահայտել հաշվապահական հաշվառման վարման ընթացքում պարբերաբար հանդիպող սխալներն ու անճշտությունները, մեթոդական օժանդակություն ցուցաբերել հանրային հատվածի կազմակերպություններին նշված խնդիրների լուծման հարցերում, միաժամանակ առավել հաճախ հանդիպող խնդիրների մասով ձևավորել միասնական դիրքորոշում և դրանք ներկայացնել հանրային հատվածի բոլոր կազմակերպություններին:

Վերը նշվածը հաշվի առնելով հեղինակի կողմից մշակվել է հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների և գործառնությունների մատյանների պատշաճ մշտադիտարկում իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական հաշվետվողականության մշտադիտարկման ուղեցույց՝ փորձելով հիմնավորել ատենախոսության գիտական նորույթի երկրորդ կետը:

Ատենախոսության երրորդ՝ «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման կարգավորման կատարելագործման ուղիները ՀՀ-ում» գլխում հեղինակն անդրադարձել է, իր կարծիքով, ներկա փուլում կատարելագործման անհրաժեշտություն ունեցող մի քանի առանձին իրավակարգավորումների: Նախ անդրադարձ է կատարվել կառավարության նախանշած հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման վարման համար համապատասխան մասնագիտական ունակություններ ու կարողություններ ունեցող գլխավոր հաշվապահի պահանջին: Վերջինս, ենթադրելով, որ կարող է հանգեցնելու հանրային հատվածի կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների որակի բարելավմանն ու առավել արժանահավատ ֆինանսական տեղեկատվության առկայությանը: Այդպես, առաջարկում է որակավորված գլխավոր հաշվապահ ունենալու, հետագայում նաև՝ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման պահանջ սահմանելու նպատակով համապատասխան կազմակերպությունների նույնականացման համար կիրառել մասնավոր հատվածում կիրառվող մոտեցումները, մասնավորապես՝ հիմնվել ակտիվների, հասույթի ու աշխատակիցների թվաքանակի չափանիշների վրա: Կարևորելով հանրային հատվածում գործող հաշվապահների գիտելիքների և մասնագիտական կարողությունների անհրաժեշտ մակարդակի պահպանման ապահովումը, հեղինակն առաջարկել է ներդնել շարունակական մասնագիտական զարգացման համակարգ: Վերը նշված ուսումնասիրությունների ու հետազոտությունների համադրմամբ հեղինակի կողմից

փոխկապակցված ձևով ներկայացվել են գիտական նորույթի երրորդ և հինգերորդ կետերը:

Ֆինանսական հաշվետվությունների համախմբման մասնավորապես նախարարությունների մակարդակով, հիմնախնդրի վերաբերյալ հեղինակը առանձնացնում է իրականացման ենթակա քայլերը: Այդպիսով հեղինակի կողմից մշակվել է գիտական նորույթի առաջին կետում ներկայացված նախարարությունների մակարդակով ֆինանսական հաշվետվությունների համախմբման մեթոդական ուղեցույց:

Հեղինակն անդրադարձել է նաև հաշվեգրման հիմունքով բյուջետավորման խնդրի քննարկմանը, որի շրջանակներում համադրելով հաշվապահական հաշվառման ու բյուջետավորման հիմունքների առավելություններն ու թերությունները, ինչպես նաև հաշվի առնելով, որ Հայաստանում գործում է հաշվեգրման հիմունքով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համակարգ և դրամարկղային հիմունքի վրա հիմնված բյուջետավորման համակարգ, ձևակերպել է իր գիտական նորույթի չորրորդ կետը՝ առաջարկելով տեսանելի ապագայում դիտարկել բյուջետային համակարգում կիրառելի սկզբունքները հաշվապահական համակարգում արդեն իսկ որդեգրված սկզբունքներին համապատասխանեցնելու հնարավորությունը՝ անցնելով հաշվեգրման հիմունքով բյուջետավորմանը:

«Եզրակացություն» բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության հիմնական եզրակացությունները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Հետազոտության օբյեկտը ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտն է, դրա իրավական կարգավորման համակարգն ու առանձնահատկությունները, իսկ հետազոտության առարկան՝ բացահայտված հիմնախնդիրներն ու ոլորտի բարեփոխումների շարունակականության ապահովման համար անհրաժեշտ քայլերը:

Հետազոտության համար հիմք են հանդիսացել հանրային հատվածի հաշվապահական հաշվառմանը վերաբերող հայրենական ու միջազգային հրապարակումներ, միջազգային տարբեր կազմակերպությունների ուսումնասիրություններ, գիտական հրապարակումներ, աշխատանքային փաստաթղթեր ու ոլորտը կարգավորող իրավական ակտեր: Հետազոտության տեղեկատվական հիմք են հանդիսացել նաև ոլորտը կարգավորող մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա տեղեկատվությունն ու տարբեր ծագմամբ հարցազրույցներ, ինչպես նաև միջազգային ու տեղական մասնագիտական հանրության կողմից կատարված հետազոտություններ:

Ատենախոսությունում կիրառվել են հետազոտական վիճակագրական և վերլուծության այլ մեթոդներ:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա հեղինակը ստացել է տեսական և գործնական նշանակության արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ կարելի է ներկայացվել հետևյալները.

1. մշակվել և առաջարկվել է նախարարությունների մակարդակով ֆինանսական հաշվետվությունների համախմբման մեթոդաբանություն,
2. առաջարկվել է հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվողականության <<մշտադիտարկման/վերահսկողության>> ուղեցույց,
3. մշակվել են հանրային հատվածի կազմակերպությունների կողմից ֆինանսական հաշվետվությունների հրապարակման, որակավորված գլխավոր հաշվապահի առկայության ու վերապատրաստումների նկատման կարգավորիչ պահանջներ,
4. հիմնավորվել է <<-ում հաշվեգրման հիմունքով բյուջետավորման անհրաժեշտությունը:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը գերծ չէ նաև թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել են հետևյալները.

1. Գիտական նորույթի 1-ին կետը ձևակերպելիս հեղինակը նշում է, որ մշակվել և առաջարկվել է նախարարությունների մակարդակով ֆինանսական հաշվետվությունների համախմբման մեթոդաբանություն, սակայն որպես դրա նպատակ նշում է հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովումը: Նման մոտեցմամբ ստացվում է, որ միայն շարունակականության ապահովման նպատակ է դրվել, սակայն հաշվետվությունների համախմբումը ուղղված է համախմբող հաշվետու կազմակերպության /տվյալ դեպքում նախարարության/ կողմից օգտագործողներին ֆինանսական տեղեկատվության տրամադրմանը:
2. Գիտական նորույթի 3-րդ կետը հիմնավորելիս, որտեղ խոսքը գնում է հանրային հատվածի այն կազմակերպությունների որոշման մասին, որոնք պետք է հրապարակեն

իրենց հաշվետվությունները և որոնց գլխավոր հաշվապահները պետք է որակավորված լինեն, ըստ էության, հեղինակը փորձում է ընդլայնել գործող օրենքով առանց այդ էլ լայն շրջանակը: Այդպես, էջ 105-ում նշում է, որ այդ մոտեցման կիրառման դեպքում 35 ՊՈԱԿ-ի փոխարեն ՀՀ-ում պահանջը կտարածվի 91 ՊՈԱԿ-ի նկատմամբ: Միաժամանակ, որպես այս գաղափարի զարգացում, գիտական նորույթի 5-րդ կետում առաջարկվում է նաև հաշվապահների պարտադիր վերապատրաստումներ՝ տարեկան դասընթացների մասնակցության ձևով:

Որքան էլ հեղինակը իր տեսակետը հիմնավորելու համար նշում է, որ այդ մոտեցմամբ ընդգրկվում է ակտիվների և բյուջետային ֆինանսավորման համեմատաբար մեծ ծածկույթ, այնուամենայնիվ առաջարկի զուտ գիտական արժեքը խիստ կշահեր, եթե հիմնավորված լիներ արդյունավետության գնահատման, որակական և քանակական ցուցանիշների վերլուծության, պատճառահետևանքային կապերի գիտականորեն հիմնավորման արդյունքներով, հետևյալ ուղղություններով՝

2.1 Ցանկալի կլիներ հստակեցնել, թե հանրային հատվածի կազմակերպությունների հրապարակվող հաշվետվությունների շրջանակը այդ ծավալով ավելացնելու առաջարկությունը օգտագործողների (կամ հանրության, նաև հանրային վերահսկողության տեսակետից) կոնկրետ գոյություն ունեցող որ պահանջը կամ որ շահն է բավարարելու, ի տարբերություն հանրային հետաքրքրություն ներկայացնող առևտրային կազմակերպությունների:

2.2 Հեղինակը բոլորովին չի անդրադառնում առաջ քաշվող մոտեցումների իրականացման ֆինանսավորման և դրանց աղբյուրների հարցերին, որոնք պետության համար հավելյալ ծախսեր կարող են առաջացնել, և նման վերլուծության բացակայության դեպքում դժվարանում է գնահատել առաջարկի կիրառման նպատակահարմարությունը մասնավորապես հետևյալ կտրվածքով՝

- որակավորված գլխավոր հաշվապահի պահանջը, որպես կանոն, ավելի բարձր մասնագիտացում, հետևաբար նաև վարձատրություն է ենթադրում,
- ում կողմից, ինչ պայմաններով է մատուցվելու հաշվապահների վերապատրաստումների ծառայությունները և ինչ աղբյուրների հաշվին են դրանք ֆինանսավորվելու
- հրապարակվող հաշվետվությունները, որպես կանոն, պահանջում են աուդիտորական եզրակացությամբ հաստատում, որոնք վճարովի են,
- ակտիվների արժեքի հիման վրա կազմակերպությունների շրջանակի որոշումը կարող է պահանջել այդ ակտիվների արժեքի ստանդարտներով որոշման անհրաժեշտություն, որոշ դեպքերում նաև անկախ վճարովի գնահատողների ներգրավմամբ:

3. Բացի դրանից, մեր կարծիքով, հանրային հատվածի առանձին կազմակերպությունների կողմից հաշվետվություններ հրապարակելու և դրա համար որակավորված գլխավոր հաշվապահ ունենալու պահանջը մեթոդական տեսակետից, հակասում է գիտական նորույթի 1-ին կետում ներկայացված նախարարությունների մակարդակով հաշվետվությունների համախմբման գաղափարին: Եթե ենթադրվում է, որ հրապարակվելու է համախմբած հաշվետվություն, ապա այն արտացոլելու է դրա մեջ ընդգրկված /համախմբված/ կազմակերպությունների ֆինանսական վիճակի, արդյունքների և հոսքերի մասին տեղեկությունները, և այլևս կարիք չի առաջանա առանձին մանր կազմակերպությունների հաշվետվությունների հրապարակման պահանջ սահմանել: Կարծում են, առավել արդյունավետ կլիներ դիտարկել նախարարությունների /որպես համախմբված հաշվետվություն ներկայացնողների/ և իրենց ենթակայության համախմբվող կազմարերպությունների հաշվառման ինտեգրված համակարգի կիրառման հնարավորությունը, երբ կազմակերպությունները հաշվառումը վարելին ընդհանուր պլատֆորմում, կամ նման հնարավորության բացակայության դեպքում՝ մշակված պարզ ընթացակարգերով մայր համախմբողին ներկայացնելին սկզբնական հաշվառման տեղեկություններ կամ ներքին հաշվետվողականության, իսկ համախմբողը /օրինակ՝ նախարարությունը/, դրա հիման վրա կազմեր և եթե պահանջվում է՝ հրապարակեր հաշվետվություն՝ պահպանելով ստանդարտների բոլոր պահանջները:

4. Հեղինակը իր գիտական նորույթի 2-րդ կետում առաջարկում է հանրային հատվածի կազմակերպություններում ֆինանսական հաշվետվողականության <<մշտադիտարկման>> ուղեցույց: Մեր կարծիքով, ցանկալի կլիներ նախ հստակ սահմանել և բացահայտել <<հաշվետվողականության մշտադիտարկում>> հասկացությունը, հստակեցնել դրա էությունը, ապա՝ անցնել դրա կիրառման ուղեցույցի մշակմանը: Նշված հասկացությունը, նույն անվանմամբ, հանդիպում է միայն ՀՀ կառավարության կողմից հաստատված Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023թթ. բարեփոխումների ռազմավարության մեջ, դարձյալ առանց բնույթը բացահայտելու: Իսկ մասնագիտական գրականության մեջ, որպես կանոն, մշտադիտարկումը /մոնիտորինգը/, որպես ներքին վերահսկողության ձև, կիրառվում է կառավարչական հաշվետվողականության բնագավառում:

Միաժամանակ բուն ուղեցույցը, որը ներկայացվում է որպես գիտական նորույթ, զարմանալիորեն տեղ չի գտել ատենախոսության հիմնական շարադրանքում, այլ հեղինակի կողմից ներկայացվել է հավելվածում:

5. Գիտական նորույթի 4-րդ կետում հեղինակը ներկայացնում և ատենախոսության եզրափակիչ ենթազխում փորձում է հիմնավորել <<ում բյուջեն պլանավորելիս կիրառել հաշվեգրման սկզբունքը, ի տարբերություն դրամարկղային հիմունքով բյուջետավորման:

Անկասկած, նշված մոտեցումը համարում ենք չափազանց կարևոր, հատկապես, որ այն լիովին համապատասխանում է հաշվապահական հաշվառման միջազգային ստանդատնների մեթոդիկային և տրամաբանությանը, սակայն ՀՀ-ում որպես նորույթ այդ մոտեցումը առաջարկելիս զգալիորեն շահեկան և առավել հիմնավոր կլիներ, եթե մի քանի նախորդ տարիների բյուջեների և կատարողականների փաստացի ցուցանիշների համեմատական վերլուծություն կատարելով հեղինակը հիմնավորեր իր առաջարկի առավելությունները, ցույց տար ֆինանսների կառավարման համար դրա արդյունավետությունը՝ կոնկրետ ՀՀ օրինակով:

Նման վերլուծությունը, մեր կարծիքով, ոչ միայն հստակ պատկերացում կտար առաջարկվող մոտեցման կիրառման նպատակահարմարության վերաբերյալ, այլ նաև կարող է հնարավորություն ստեղծել հաշվեգրվող եկամուտների ու ծախսերի ու փաստացի դրամական հոսքերի հաշվետվությունների վերլուծության ու հաշվառման կազմակերպման միջոցով հիմք ապահովել հանրային հատվածի կազմակերպություններում դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հստակ, արժանահավատ հաշվառման ու վերահսկողության համար: Ի դեպ, դրանք միաժամանակ կարող են ազդել ակտիվների հաշվեկշռային արժեքի վրա, որը հեղինակը հիմք է ընդունում իր գիտական նորույթի 3-րդ կետում առաջ քաշված մոտեցման կիրառման ժամանակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտողություններով, ինչպես նաև ատենախոսության դրական արժանիքներով և գիտական մակարդակով հանդերձ՝ Կարեն Իսմայիլի Ավստրիայի «ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման համակարգի կատարելագործման ուղիները» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել, որպես ինքնուրույն, պատշաճ մակարդակով կատարված գիտական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվության վերաբերյալ տեսական և գործնական կարևոր խնդիրներ և հետազոտության արդյունքում առաջարկված են գիտական նորույթ պարունակող հեղինակային մոտեցումներ:

Հետազոտության արդյունքները քննարկված են Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանում, իսկ հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակած թվով 6 (վեց) գիտական հոդվածներում՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հրատարակման պահին ընդունելի հանդեսներում ու ժողովածուներում:

Ներկայացված սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Կարեն Իսմայիլի Ալավերդյանի «ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման համակարգի կատարելագործման ուղիները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ա. Ա. Հակոբյան

26 հոկտեմբերի 2020թ.

Ա.Ա.Հակոբյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ
«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ
Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ



Ն. Կ. Հովհաննիսյան
26 հոկտեմբերի 2020թ.